ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/150

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.10.2018թ. թիվ 01.1/26-3/17936-18 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի 11.09.2018թ. թիվ ԵԳ/191-18 և 25.09.2018թ. թիվ ԵԳ/205-18 գրությունների հիման վրա, 03.10.2018թ. թիվ 01.1/26-3/17936-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մեդիսար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Մեդիսար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 05.10.2018թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ առարկում է այն փաստը, որ հայտի ներկայացման դրությամբ ունեցել է որևէ հարկային պարտավորություն: Ավելացնելով, որ վերոգրյալը հաստատվում է մի շարք վերաբերելի փաստաթղթերով, մասնավորապես՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային մարմնին կատարված թիվ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/34 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հարցումներին ի պատասխան տեղեկատվությամբ հստակ ամրագրված է այն հանգամանքը, որ Ընկերությունը չունի որևէ ժամկետանց պարտավորություն: Վկայակոչվածը բխում է 31.07.2018թ. և 16.08.2018թ. հարկային մորմնի կողմից ուղարկված տեղեկատվություններից: Տվյալ տեղեկատվությունում ամրագրված ժամկետային հարկային պարտավորությունների բացակայության հանգամանքը վերաբերվում է նաև Պատվիրատուի կողմից կատարված հարցման հարկային ժամանակահատվածին, քանզի եթե լիներ որևէ ժամկետանց պարտավորություն, ապա այդ իր ամրագրումը կստանար սույն տեղեկատվությունում: Ավելին, Պատվիրատուի կողմից կատարված հարցմանն ի պատասխան տեղեկատվությունում ներառված հարկային ժամանակահատվածի ժամկետանց պարտավորությունը չէր կարող առաջանալ մի քանի օրվա ընթացքում, այն վերաբերվել է վկայակոչված փաստաղթերով ամրագրված հարկային ժամանակահատվածին, որոնցով հիմնավորվում է Ընկերության որևէ ժամկետանց պարտավորություն չունենալու հանգամանքը: Հարկային մարմնի կողմից տրամադրվող տեղեկատվությունը նախկինում չի ներառել դրոշմանիշային վճարների գծով պարտավորույթունները: Այդ հանգամանքը նույնիսկ մինչ օրս իր արտացոլումը չի ստացել էլեկտրոնային հաշվում և անձնական քարտում: Սակայն սույն թվականի օգոստոսի վերջից հարկային մարմինը առանց համապատասխան հարկ վճարողների իրազեկման նախաձեռնել է այդ տեղեկատվության ամրագրման գործընթացը գնումների գծով կատարված հարցումներում: Ստացվում է մի իրավիճակ, երբ պարտաճանաչ գնման գործընթացին մասնակցող և միլիոնների շրջանառություն ունեցող Ընկերությանը հարկային մարմինը իր կողմից միակողմանի կայացված որոշմամբ, առանց շահագրգիռ անձանց

իրազեկելու կարող է նման խնդրի առաջ կանգնեցնել, երբ նախկինում դրոշմանիշային վճարները չեն ներառվել համապատասխան տեղեկատվության մեջ: Այսպիսով ստացվում է, որ Ընկերության կողմից պահպանվել է գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը, այն է՝ Ընկերությունը հայտի ներկայացման դրությամբ չունի որևէ ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընկերությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ սույն դիրքորոշմանը կից փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է նաև 04.09.2018թ-ին Պատվիրատուին՝ ի հավաստումն Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության և Ընկերության դիրքորոշման հիմնավորվածության: Սակայն, Պատվիրատուի կողմից ոչ միայն պատշաճ վերլուծության և գնահատականի չեն արժանացել Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը, այլ հակառակը՝ վերջինս ձեռնամուխ է եղել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացին: Պատվիրատուն նման գործընթացի հարուցման համար համապատասխան իրավասու մարմին դիմելով՝ չի տրամադրել վերջինիս նաև Ընկերության կողմից ներկայացված գրությունը և դրան կից փաստաթղթերը, որպեսզի վերջինս կարողանար ապահովել տվյալ գործի բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն: Ստացվում է, որ Պատվիրատուի համար ինքնանպատակ է Ընկերության ներառումը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանզի վերջինս պարզապես անուշադրության է մատնել մի շարք փաստեր, որոնք վկայում են Ընկերության դիրքորոշման հիմնավորվածության մասին:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել Ընկերության բազմամյա տարիների փորձն ու գնումների բնագավառում նրա բարեխիղճ գործելաոճը, ինչպես նաև սույն նամակին այլ գնումների շրջանակում տրամադրված հարկային հարցումների պատասխանները, անձնական քարտից կատարված քաղվածքում տվյալ ժամանակահատվածում որևէ հարկային պարտավորության բացակայությունը, համարել, որ Ընկերության կողմից տրամադրված կամ ներկայացված հայտարարությունները համապատասխանում են իրականությանը՝ հիմք ընդունելով սույն գրությանը կից ներկայցված փաստաթղթերը և դիտարկել Ընկերության կողմից գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ հոդվածի պահանջը պահպանված:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/150 ընթացակարգի շրջանակներում 08.10.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը.

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.09.2018թ. թիվ ԵԳ/191-18 գրությամբ հայտնել է, որ սույն թվականի օգոստոսի 10-ին «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-18/26» ծածկագրով ընթացակարգ, որի արդյունքում 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ օգոստոսի 22-ին հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

27.08.2018թ. ստացվել է եզրակացություն, որի համաձայն՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 37 000 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը, «Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունները որակվել են իրականությանը չհամապատասխանող և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի համաձայն՝ վերջինիս հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/150 ընթացակարգի շրջանակներում 08.10.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/150 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/150 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-18/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 10.08.2018թ. հայտ է ներկայացրել «Մեդիսար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 18/26-3 արձանագրության 2.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 4, 11, 13-16, 18-21-րդ չափաբաժինների մասով «Մեդիսար» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 27.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մեդիսար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 37 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.09.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 18/26-5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.10.2018թ. թիվ 01.1/26-3/17936-18 գրությունը, «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի 11.09.2018թ. թիվ ԵԳ/191-18 և 25.09.2018թ. թիվ ԵԳ/205-18 գրությունները և կից փաստաթղթերը, «Մեդիսար ՍՊԸ-ի 05.10.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Հանրապետական

անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-18/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***10.08.2018թ***. հայտ է ներկայացրել «Մեդիսար» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 18/26-3 արձանագրության 2.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 4, 11, 13-16, 18-21-րդ չափաբաժինների մասով «Մեդիսար» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 20.08.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Մեդիսար» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 27.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 37 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.09.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 18/26-5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 10.08.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 37 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 05.10.2018թ. գրությամբ ներկայացրել է 10.08.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 10.08.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի

քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Մեդիսար» ՍՊԸ-ն «ՀԱԲԼԾԿ-ԳՀԱՊՁԲ-18/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.10.2018թ. թիվ 01.1/26-3/17936-18 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02555635) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ